ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4, Հեռ. 543 991, Ֆաքս 543 997, E-mail: info@anra.am

№02-Ն-67 05.09. 2012թ.

ՀՀ կառավարության
աշխատակազմի ղեկավար

պարոն Դավիթ Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 30.08.2012թ. N02/16.2/12203-12 հանձնարարականի, «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 13-ի N 173 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկվում է հետեւյալը.

Որոշման նախագծի հավելվածի ցանկի «Պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունները» սյունակի 7-րդ կետում «իզոտոպների կազմի, մարտական, ֆիզիկական, քիմիական եւ այլ հատկությունները,» բառերը փոխարինել « միջուկային նյութերի եւ 1-ին ու 2-րդ դասի ռադիոակտիվ նյութերի քանակությունը, գտնվելու վայրը,» բառերով, նույն կետի եւ 17-րդ կետի «Պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունները տնօրինելու լիազորություններով օժտված պետական մարմինները» սյունակում լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե» բառերը:

Հարգանքով՝

Աշոտ Մարտիրոսյան

Մ. Մարգարյան
Իրավաբանական եւ լիցենզավորման բաժին -563124

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ...
045-23332
06 09 12